

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհավորական ուղերձը Վերջին
զանգի կապակցությամբ
26.05.2023թ

Սիրելի՛ շրջանավարտներ,
Շնորհավորում եմ բոլորիդ վերջին զանգի՝ արդեն գեղեցիկ ավանդույթի վերածված
հիշարժան այս օրվա կապակցությամբ:

Հասկանալի ու բնական է այն հուզմունքը, որ ապրում եք դուք՝ հրաժեշտ տալով
ջերմ ու հարազատ դարձած կրթօջախներին, սիրելի ուսուցիչներին:

Տարիներ շարունակ դպրոցը ձեզ համար եղել է կրթման, դաստիարակման և
արժեքների ձևավորման յուրատեսակ դարբնոց:

Այսօր դպրոցական ուսումնառության ավարտը խորհրդանշող վերջին զանգը ձեզ
առաջնորդում է դեպի նոր ու մեծ կյանք, դեպի ինքնադրսևորման և
ինքնահաստատման ավելի լայն ասպարեզներ: Սա այն պահն է, երբ պետք է
կատարել մասնագիտության ճիշտ ընտրություն:

Համոզված եմ, որ դպրոցական տարիներին ստացած ձեր հարուստ գիտելիքները,
հայեցի կրթությունն ու ազգային արժեքների ոգով դաստիարակությունը կօգնեն ձեզ
սեփական ունակություններն ու ձիրքերը ի սպաս դնելու երկրի և ժողովրդի հետագա
բարգավաճմանը՝ իբրև մեր պետության արժանավոր քաղաքացիներ: Կյանքի բոլոր
շրջադարձերում առաջնորդվե՛ք արժանապատիվ ապրելու այն սկզբունքներով, որ
սերմանել են Ձեր ուսուցիչները:

Ինչպիսին էլ լինի ձեր ընտրած ճանապարհը, միշտ մաքուր պահեք ձեր հոգին և
սթափ՝ միտքը, ու, վստահ եմ, որ ամեն ինչում կհաջողեք:

Շնորհավորում եմ մեր մանկավարժներին ևս ու շնորհակալություն հայտնում բարդ
ու պատասխանատու աշխատանքի համար: Շնորհավորում եմ նաև ձեր ծնողներին:
Թող իրականություն դառնան ձեզ հետ կապված նրանց բոլոր երազանքները: